ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

01 դեկտեմբերի 2020 թվականի թիվ 134

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ, 4-ՐԴ ԱՆՑՈՒՄ, ԹԻՎ 5 ՀԱՍՑԵԻ 0.26 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածի 5-րդ մասի դրույթներով«Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի օգոստոսի 17-ի թիվ ՍՊ/14. 1/23278-2020 հանձնականի պահանջներով,«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 22-ի N 1823-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2020 թվականի օգոստոսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան գյուղական համայնքի վարչական սահմանում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1326-Ն որոշման դրույթով, այն է՝ N 4 հավելվածի 062-001 ծածկագրով տողի 10-րդ սյունակում «մանկապարտեզ» բառը փոխարինել «բնակելի շենք» բառերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» N 88 որոշման 7-րդ մասի դրույթը՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1 . Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք Ջրաշինարարների փողոց, 4-րդ անցում, թիվ 5 հասցեի 0 . 26հա հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման, իսկ շենքը՝ բազմաբնակարան բնակելի շենք:

2 . Հողամասի և գույքի գործառնական նշանակության փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ

Գ.ԲԱԲՈՒՋՅԱՆ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լ. ՂԱՋԱՐՅԱՆ

Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հ.ՄԱԹՈՍՅԱՆ

Մ.ՄՆԱՑՅԱՆ

Գ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

1 դեկտեմբերի 2020թ.
գյուղ Ախուրյան